

VIII. ՀՀ 2003 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ
ՀՀ ԱՎԾ-ին ՀԱՏԿԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՀԱԾՎԻՆ
ՓԱՍՏԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐ

Ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման ծրագրերի, տարե-սկզբին հաստատված 2003թ. տարեկան նախահաշվի նկատմամբ փաստացի հատկացվել են (տես՝ հավելված 4).

- պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանման համար (01.07.01 ծրագրով) սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2004թ. կազմել է 288294.7 հազ. դրամ՝ նախատեսված 294488.2 հազ.դրամի փոխարեն կամ փաստացի ֆինանսավորումը կատարվել է 97.9%-ով (2002թ.՝ 98.4%): Ընդ որում, ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա հատկացումներն իրականացվել են 100%-ով: Իսկ ՀՀ ԱՎԾ կողմից բյուջետային հայտերը պակաս են ներկայացվել «գործուղման և ծառայողական ուղևորությունների ծախսեր», «կապի ծառայություններ» հոդվածների գծով, ինչի հետևանքով տարեկան նախահաշվով նախատեսվածի նկատմամբ ֆինանսավորումը կատարվել է համապատասխանաբար՝ 86.7%-ով և 79.3%-ով,
- պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման համար (01.07.04 ծրագրով) սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2004թ. կազմել է 179141.9 հազ.դրամ՝ նախատեսված 181712.3 հազ.դրամի փոխարեն կամ փաստացի ֆինանսավորումը կատարվել է 98.6%-ով (2002թ.-ին՝ 98.7%): Ընդ որում, ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա հատկացումներն իրականացվել են 100%-ով: Իսկ ՀՀ ԱՎԾ կողմից բյուջետային հայտերը պակաս են ներկայացվել «կապի ծառայությունների» և «էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր» հոդվածների գծով, ինչի հետևանքով տարեկան նախահաշվով նախատեսվածի ֆինանսավորումը կատարվել է համապատասխանաբար 60,6% և 91.8%-ով,
- ՀՀ 2001թ. անցկացված մարդահամարի նյութերի մշակում, ամփոփում և հրապարակում (01.07.05 ծրագրով) սահմանված ծախսերի ֆինանսավորումը առ 01.01.2004թ. կազմել է 64246.7 հազ.դրամ՝ նախատեսված 65449.0 հազ.դրամի փոխարեն կամ փաստացի ֆինանսավորումը կատարվել է 98.2%-ով (2002թ.-ին 54.9%): Ընդ որում, ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված բյուջետային հայտերի հիման վրա հատկացումներն իրականացվել են 100%-ով: Իսկ ՀՀ ԱՎԾ կողմից բյուջետային հայտերը պակաս են ներկայացվել «կապի ծառայությունների» և «էլեկտրաէներգիայի, վառելիքի և ջեռուցման ծախսեր» հոդվածների գծով, ինչի հետևանքով տարեկան նախահաշվով նախատեսվածի ֆինանսավորումը կատարվել է, համապատասխանաբար, 49.5% և 43.3%-ով,
- ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 23-ի թիվ 406-Ն, մայիսի 2-ի թիվ 475-Ն և հուլիսի 3-ի թիվ 860-Ա որոշումներով «Նախորդ բյուջետային տարիների արդյունքներով առաջացած պարտքերի մարում» (14.06.01 ծրագրով) սահմանված ծախսերի ֆինանսավորումն առ 01.01.2004թ. կազմել է 40820.7 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: